ղաքավարութեան ունիս իշխանութիւն, առ 'ի յանդիմանել զվատթարացեալսն, եւ 'ի փառաւորել զլաւագոյնսն։

Ըստ Եզեկիային քեզ տիւն դարձեալ 'ի վերջս՝ տացի նշան. ըստ Եզեկիային քեզ տիւն դարձեալ 'ի վերջս՝ տացի նշան, երկարելով զժամանակս. եւ ըստ քաջին Յեսուայ՝ արեգակն 'ի քեզ առկայասցի, մինչեւ 'ի վախճան պահանջեցեալ զվրէժս 'ի Հագարայ եւ 'ի Քանանացւոյն. եւ զանվախճան խաղաղութիւն աշխարհիս Հայոց ընձեռեսցես։

Քանզի անյիշաչար հեզութեամբ, քանզի անյիշաչար հեզութեամբ, եւ մեծաւ զղջմամբ՝ ըստ արքային Դաւթի, աստուածածանօթութեան շնորհն 'ի քեզ դարձցի. եւ 'ի սակս այսմիկ՝ հատանող տապարն 'ի բաց դիցի. եւ տնկագործականին մաղթանք ժամանեսցեն 'ի կենդանական թզենիդ. պտղալից արդարութեամբ խաղաղասցի կենցաղավարութիւնդ քո, հանդերձ զաւակօք եւ համբաւով բարեաց։

Եւ եպիսկոպոսապետն կատարէ զպատարագն մեծաւ հանդիսիւ եւ ուրախութեամբ. եւ ասէ աղօթք պատարագի. «Աստուած, որ զարմանալիդ ես 'ի գործս քո», եւ այլն։ Ի վերայ ժողովրդեանն.

«Աստուած ամենակարող, որ յամենայնի խնամես զժողովուրդս քո, օրհնեա զսոսա եւ արժանի արա յաւիտենական թագաւորութեանդ. շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում», եւ այլն։- Աղօթք արքային. «Աստուած պարգեւեսցէ քեզ ուժգնութիւն եւ կարողութիւն 'ի վերայ ամենայն հակառակորդաց քրիստոնէից, առ 'ի հաստատել զեկեղեցի խաղաղութեամբ. որպէս զի մնասցես 'ի թագաւորութեանդ, եւ առաջնորդեսցես զօրաց քրիստոնէից՝ աներկիւղ յամենայնի. որով պահեսցես զժողովուրդս խաղաղութեամբ, եւ ժառանգեսցես զյաւիտենական կեանսն ընդ ամենայն թագաւորս բարեպաշտս, յաւիտեանս յաւիտենից»։

Կատարումն պատարագի. *«Բարերար տէր», եւ այլն։*

Ելանեն յեկեղեցւոյն. եւ հեծանի թագաւորն 'ի ծածկած երիվար. եւ Սպարապետն (գունդստապլն) հեծանի միայն առաջի թագաւորին, եւ *Նշանակն* արքունի 'ի ձեռին իւրում. եւ Թագադիրն յաջ դիի թագաւորին, ունելով զմիւս թագն 'ի ձեռին. եւ Սենեսկալն 'ի ձախ դիին. եւ Պօղլերն զկնի. եւ Ջամբոլայն զկնի թագաւորին, թրաքամք. եւ Մարաջախտն ունելով զ*Նշանակ* Գունդստապլին՝ գնայ առաջի նորա. եւ այլ լիճ ճորտերն՝ թրաքամք՝ պատեալ զթագաւորն, եւ ամենայն երգովք եւ փառազարդեալք զան յապարանս արքունի։ Եւ մտեալ 'ի ներքս՝ նստի թագաւորն յաթոռ թագաւորութեան. եւ աստիճանաւորքն կանգնին յաջակողմն եւ 'ի ձախա-